



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 16 ՅՈՒՆԻՍ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 98

ԱՍՏՈՒԱԾ ԹԱԳԱԻՈՐԵԼՈՒԻ ԿՈՒ ԳԱՅ

Նոր երգ երգեցէ՛ք Տիրոջ, որովհետեւ սփանչելի բաներ ըրաւ. յաղթանակեց իր զօրութեամբ, իր սուրբ բազուկով:

Տէրը ցոյց տուաւ իր տարած յաղթանակը, բոլոր ազգերուն յայտնեց իր արդարութիւնը:

Զմոռցաւ բնաւ իր ժողովուրդին հանդէպ իր տածած սէրն ու հաւատարմութիւնը, եւ ամբողջ աշխարհը տեսաւ թէ ինչպէս մեր Աստուածը փրկեց մեզ:

Ուրախութեամբ աղաղակեցէ՛ք Տիրոջ դիմաց, ով աշխարհ, ուրախաճայն գոչեցէ՛ք, ցնձացէ՛ք եւ ներբող երգեցէ՛ք:

Թող հրնուանփով աղաղակեն-
ծովը՝ իր լման բովանդակութեամբ,
աշխարհը՝ իր բոլոր բնակիչներով:

Գետերը թող ծափ գարնեն, եւ անոնց հետ՝
լեռները թող ցնծութեամբ երգեն

Տիրոջ առջեւ, որ ահա կու գայ աշխարհը դատելու:
Անիկա արդարութեամբ պիտի կառավարէ աշխարհը,
ուղղամտութեամբ պիտի կառավարէ ժողովուրդները:

ՆԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:*

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ թո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ թո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՅԱԿՈՒԲ ԵՓՐԵՄՆ ՈՒ ՄԱՆԱՍԷՆ ԿՕՐՀՆԷ (48:1-22)

«Ես չեի յուսար, որ քու երեսդ պիտի կրնամ փեսնել եւ ահա Աստուած ինձի քու սերունդդ ալ ցուցուց» (11 հմր):

«Իսրայել իր աջ ձեռքը երկնցուց ու Եփրեմին գլխուն դրաւ, որ պզտիկն էր ու ըի ձախ ձեռքը Մանասէին գլխուն վրայ» (14):

Ահաւասիկ, Յակոբ երբեք յոյս չունէր, որ կրնայ Յովսէփը փեսնել, քանի իմացուցած էին իրեն թէ ան մեռաւ, բայց Աստուծոյ ծրագիրը եւ փնտրիչները բոլորովին փարբեր է մեր ծրագրէն ու մտածումէն:

Գալով, Յովսէփի զաւակներուն օրհնութեան, հեղափոխական բաժինը օրհնութիւններուն փոփոխութիւնը: Այս պարագային օրհնութիւնը որ կը փրոտի աստուածային օրհնութիւնն է եւ ոչ թէ Յակոբինը: Ուստի, իբրեւ այդպիսին, Աստուած նախ ներկան չէ որ կը դիպէ, այլ՝ ապագան: Երկրորդ, Աստուած չի նայիր մարդոց պարագայական ճշմունքի արդիւնքներուն (հարուստ, աղքատ, կրփսեր կամ անդրանիկը): Սա կը նշանակէ, մարդոց արժանիքը չէ պայմանաւորուած իր ճշմունքով, այլ Աստուած է որ մարդոց գործերը կը փեսնէ եւ իսկական արժէքը կու փայ անոնց եւ իր արդար դիրքին կը հասցնէ:

ՅԱԿՈՒԲԻ ՎԵՐՉԻՆ ԽՕՍՔԵՐԸ (49:1-33)

Այս գլխուն առաջին բաժինը կը ներկայացնէ Յակոբի իր զաւակներուն փրում խօսքերը, եւ այդ խօսքերուն ընդմէջէն երբայեցի ժողովուրդին բոլոր ցեղերուն ապագան: Երկրորդ բաժինը Յակոբի անդրանկութեան եւ նահապետական իրաւունքի փոխանցումը Յովսէփին:

Հեղափոխական է, որ Յակոբ իր վերջին խօսքերը փոխանցելու ժամանակն իր զաւակներուն, շար աւելի կը ծանրանայ միայն երկու հոգիներու վրայ Յուդա եւ Յովսէփ, անոնց մէջ փեսնելով այն մարգարէական պարգաւները, որոնց կարարումը փեղի պիտի ունենար Քրիստոսով: Սա կը նշանակէ որ Յակոբի այս խօսքերը, ու նաեւ անոր փրում օրհնութիւնը այս երկուքին, կապուած են Աստուծոյ պարգաւատման փրկութեան ծրագրին: Եւ ահա ամէն մէկուն համար յարուկ նկարագրական մըն է որ կը ներկայացնէ:

Ռուբէն, որպէս առաջին հրեայ ժողովուրդը, որ հաւատարիմ չէր Աստուծոյ կոչին, ու մանաւանդ պղծեց անկողինը: Շմաւոն եւ Ղեւի, կը ներկայացնեն չարը եւ մահը. դպիրներն ու քահանաները: Յուդա՝ Քրիստոսը, Անոր բերելիք թագաւորութիւնը: Զաբուղոնը՝ հեթանոս աշխարհը, որ աշխարհի ծովուն մէջ կ'ալեկոծի եւ նաւահանգիստ մը կը փնտրէ: Իսաքար՝ հապուցում: Քրիստոս Ինքն է մեր հապուցումը: Ասեր՝ երկինքէն հաց: Նափթաղիմ՝ որթափունկ: Յովսէփ՝ դարձեալ Քրիստոսը կը պարկեցան: Ի վերջոյ, Բենիամին՝ անոր մէջ կը փեսնէ Պօղոս Առաքեալը:

ՅՈՎՍԷՓ ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԿՄՊԱՀՈՎԵՑՆԷ (50:15-21)

ՅՈՎՍԷՓԻ ՄԱՀԸ (50:22-26)

Յովսէփ իր հորը մահէն ետք, երկու անգամներ կը խօսի իր եղբայրներուն հետ եւ կը հանգստացնէ զիրենք եւ կը յիշեցնէ ըսելով, թէ. «Մի՛ վախնաք, միթէ ես Աստուծոյ փեղն եմ: Եւ թէպէտ դուք ինձի դէմ չարութիւն խորհեցաք, բայց Աստուած զայն բարիի դարձուց. այնպէս որ այս օրուան եղածին պէս՝ շար ժողովուրդ ապրեցնէ» (19-20 հմր): Այս ըսելով կը նշանակէ, թէ անոնց չարիքը արդէն ներած է: Նաեւ կը յիշեցնէ, թէ «Աստուած անշուշտ ձեզի այցելութիւն պիտի ընէ ու ձեզ այս երկրէն պիտի հանէ դէպի այն երկիրը, որուն համար ինք երդում ըրաւ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին»:

Իսկ գալով Յովսէփի մարմնի փոխադրման հարցով, Յովսէփի մահէն յետոյ անմիջապէս չի փոխադրուիր անոր մարմինը: Արովհետեւ այնքան արեւն որ հոն էր մարմինը, կարծէք ապահովութիւն մըն էր անոնց համար, եւ նաեւ փարաւոններ կը ճանչնային: Բայց յետոյ արդէն, Ելից գիրքը մեզի կը ներկայացնէ, որիչ Փարաւոն մը պիտի գայ որ պիտի չճանչնայ Յովսէփին, ու անոր փրում փրում իրաւասութիւնները: Միւս կողմէ, Յակոբի նման, ինք տես կը խնդրէ եղբայրներէն, որ իր մարմինը Եգիպտոս չձգեն, այլ փանին Բանանու երկիր, որպէսզի Յակոբի նման Եգիպտոս չմնայ, այսինքն՝ մեղքի մէջ չմնայ: